ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
УПРАВЛЕНИЕ ДОУНИВЕРСИТЕТСКОГО ОБРАЗОВАНИЯ

YEREVAN STATE UNIVERSITY
PRE-UNIVERSITARIAN EDUCATION DEPARTMENT

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԻՆՉՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia
(+374 10) 55-40-03, pre-ued@ysu.am, www.ysu.am

№ 01 « 10 » 02 2020 թ.

Հարգելի տնօրեն

2020 թ. մարտի 14-ին ժ.11^{00}-ին Երևանի պետական համալսարանում անց է կացվելու դպրոցականների օլիմպիադայի I փուլը:

Օլիմպիադան կանցկացվի հետևյալ հանրակրթական առարկաների գծով՝

մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն, հայոց պատմություն, հայոց լեզու և գրականություն, ռուսաց լեզու, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ստեղծագործական աշխատանք:

«Ինֆորմատիկա» առարկայից օլիմպիադան կանցկացվի մեկ փուլով՝ **մարտի 28-ին ժ.11^{00}-ին:**

Օլիմպիադան նախատեսված է միայն 12-րդ դասարանի աշակերտների համար: Յուրաքանչյուր դպրոցից կարող է մասնակցել 2-3 աշակերտ ըստ առարկաների (ամեն աշակերտ օլիմպիադային կարող է մասնակցել **միայն 1 առարկայից**):

Օլիմպիադայի մասնակիցները **մարտի 14-ին ժ.10^{30}-ին** պետք է հավաքվեն համապատասխան ֆակուլտետի դեկանատի մոտ կամ ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի բակում:

Խնդրում ենք Ձեզ մինչև **փետրվարի 25-ը** հաստատել Ձեր աշակերտների մասնակցությունը ըստ առարկաների՝ նշելով աշակերտի անուն, հայրանուն, ազգանունը, դասարանը և այն ուղարկել հետևյալ հասցեով.

ՀՀ, 0025 ք.Երևան
Ա.Մանուկյան 1, ԵՊՀ
Մինչհամալսարանական կրթության վարչություն
հեռ.(37410)55-40-03, 060-710-132
E-mail : **pre-ued@ysu.am**

Մասնակիցների հայտերը կարող եք ուղարկել նաև էլ.փոստով:

I փուլի հաղթողները կմասնակցեն օլիմպիադայի II փուլին, որը տեղի կունենա **մարտի 28-ին ժ.11^{00}-ին** Երևանի պետական համալսարանում:

Օլիմպիադայի փակման և պարգևատրման արարողությունը տեղի կունենա **ապրիլի 17-ին ժ.15^{00}-ին** ԵՊՀ մեծ դահլիճում (կենտրոնական մասնաշենք, 3-րդ հարկ):

<u>Ի գիտություն</u>

ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ օլիմպիադայում հաղթած (I, II և III կարգի դիպլոմների արժանացած) աշակերտներին Համալսարանի վճարովի համակարգ ընդունվելու դեպքում առաջին կուրսում կտրամադրվի համապատասխանաբար 50, 40 և 30 տոկոս ուսման վարձի զեղչ:

Վարչության պետ՝ Վ.Ս.Գալստյան